Գործում է սկսած 07.11.2022թ.-ից

Ծառայության նկարագիր

Կրեդո Անշարժ Գույք

Դիմել հիմա

Վարկի նպատակ	Վարկավորում սպառողական նպատակով
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	100 000 — 12 000 000
Վարկի ժամկետ	12-120 ամիս
Վարկի մայր գումարի և տոկոսագումարների մարման եղանակ/Պարբերականություն	Անուիտետ/ Ամսական
Տրամադրման եղանակ	Անկանխիկ
Տրամադրում	Միանվագ
Տարեկան անվանական տոկոսադրույք	22.7 % նվազող մնացորդի նկատմամբ*
Տարեկան փաստացի տոկոսադրույք	42.9-58.84 %**
Վարկի սպասարկման վճար (ամսական)	0.9% վարկի տրամադրված գումարից
Ձևակերպման միանվագ վճար	3% վարկի տրամադրված գումարից
Գույքի գնահատման վճար անհրաժեշտության դեպքում մասնագիտացված գործակալության կողմից	մինչև 25,000 ՀՀ դրամ
Միասնական տեղեկանք	մինչև 10,000 ՀՀ դրամ
Նոտարական վավերացման վճարներ	մինչև 15,000 ՀՀ դրամ
Գրավի պետական գրանցման վճար	մինչև 27,000 ՀՀ դրամ

Վարկառուի նկատմամբ պահանջներ

Կարգավիճակ	ՀՀ ռեզիդենտ ֆիզ անձիք
Տարիքային սահմանափակում	19-70

Տույժերը, տուգանքները

Ժամկետանց մայր գումարի գծով, օրական	**0.13%**
Ժամկետանց տոկոսագումարի գծով, օրական	**0.13%**
Վարկի վաղաժամկետ մարման համար	*Վարկը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:*

Հայտի վերաբերյալ այլ պայմաններ

Վարկային պատմություն	ԱՔՌԱ
Ընկերության կողմից կիրառվող սքոր	Ֆայկո
Ընկերության կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ	15 րոպե
Վարկառուին վարկի գումարի տրամադրման ժամկետ *(Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո)*	15-30 րոպե
Ձևակերպման վայր	Մասնաճյուղեր
Վարկի տրամադրման վրա ազդող դրական գործոններ	-Փաստաթղթային ամբողջական փաթեթի առկայություն -Վարկի սպասարկման համար անհրաժեշտ եկամուտներ -Դրական կամ չեզոք վարկային պատմություն
Վարկի տրամադրման վրա ազդող բացասական գործոններ	— Բացասական վարկային պատմություն — Վարկարժանության բացասական գնահատական — Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում — Այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը — Անհրաժեշտ փաստաթղթերի բացակայություն — Այլ գործոններ
Հայտի ուսումնասիրության վճար	Անվճար

Ապահովում

Ապահովում	Բնակելի անշարժ գույքի գրավ
Առավելագույն հարաբերակցությունը գրավի լիկվիդային արժեքի նկատմամբ	70% (արժեքը սահմանվում է համաձայն ”Համապատասխան գրավի գնահատման առավելագույն արժեքի հաշվարկման ժամանակ գեղչման գործակցի որոշման” մեթոդաբանության)
Գրավատու	Գրավատուն պետք է հանդիսանա վարկառուի փոխկապակցված անձ

Պահանջվող Փաստաթղթեր

— Անձնագիր (փախստականի տեղեկանք,կացության քարտ,հատուկ անձնագիր)/ID քարտ
— Սոցիալական քարտ ՀՀ քաղաքացու համար (տեղեկանք սոց քարտի բացակայության մասին)
— Անձը հաստատող վկայական կամ աշխատավարձի մասին տեղեկանք /միայն ուժային կառույցների աշխատակիցների համար/
— Սեփականության վկայական, գնահատման ակտ, գույքի սեփականատեր հանդիսացող անձանց անձնագրեր, ամուսնական կարգավիճակի մասին տեղեկանք, սահմանափակումների մասին տեղեկանք

Կազմակերպության կողմից հաճախորդին տրամադրվող փաստաթղթեր

Փաստաթղթի տեսակ	Տրամադրման ժամկետ	Վճար
Վարկի փակման տեղեկանք	1 աշխատանքային օր	1500 ՀՀ դրամ
Վարկի փակման տեղեկանք	Նույն օրը	3000 ՀՀ դրամ
Վարկի մնացորդի տեղեկանք վարկը տեղափոխելու գործարքի համար	1 աշխատանքային օր	Անվճար
Ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք	1 աշխատանքային օր	1500 ՀՀ դրամ
Ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք	Նույն օրը	3000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի գրավով վարկի փակման կամ կադաստրի տեղեկանք	1 աշխատանքային օր	Անվճար
Քաղվածք	Նույն օրը	Անվճար

Օգտակար տեղեկություններ

Ի՞նչ է վարկային պատմությունը	Վարկային տեղեկատվության սուբյեկտի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկային տեղեկատվության սուբյեկտի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:
Ի՞նչ է Ֆայկո սքորը	ՖԱՅԿՈ Սքորը սքորինգային համակարգ է, որը տալիս է վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականը՝ որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք:
Ի՞նչ է վարկարժանությունը	Վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականն է, որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք:
Ինչպե՞ս բարելավել վարկային պատմությունը և Սքորը	— նվազեցնել առկա վարկերի քանակը՝ դրանք մարելով մասամբ կամ լիովին, — նվազեցնել առկա վարկերի մնացորդները, — նվազեցնել տրված երաշխավորությունների

	քանակը և գումարը, — ապահովել տրված երաշխավորությունների մասով ժամկետանց գումարների լիովին մարումը:
Վարկային պատմության էությունը և դրա կարևորությունը	Վարկային պատմությունը հաճախորդի ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, այն պարունակում է հաճախորդի ստացած վարկերի, դրանից բխող մարումների կատարման, այլ մարդկանց տրված երաշխավորությունների, ժամկետանց վարկերի առկայության, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքների մասին տեղեկատվություն:
Ինչպե՞ս փոխել սխալ կամ թերի վարկային պատմությունը	Հաճախորդը կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին: Տեղեկացումը կարող է իրականացվել գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:
Որքա՞ն ժամանակ է պահպանվում իմ վարկային պատմությունը	Վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Առավել մանրամասն www.abcfinance.am, www.abcfinance.am, www.acra.am,www.acra.am

Դիմել հիմա

*** ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**: Վարկի անվանական տոկոսադրույքը վարկային պայմանագրի գործողության ընթացքում կարող է փոփոխվել, եթե 4 ամիս և ավել առանց ուշացման, համաձայն վճարման ժամանակացույցի մարում կատարվի: Տարեկան անվանական տոկոսադրույքի իջեցումը կատարվելու է քառամսյակը հաջորդող ամսվա մինչև 15-ը 1 տոկոսի չափով:Տոկոսադրույքի իջեցման մասին կտեղեկացվի SMS հաղորդագրությամբ՝ իջեցումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

**** ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, վարկի նվազող մնացորդի նկատմամբ: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս վարկի իրական արժեքը հաճախորդի համար, մարման գրաֆիկին համապատասխան վճարումները կատարելու պարագայում, ներառյալ բոլոր այն հավելյալ ծախսերը և միջնորդավճարները, որոնք կատարվում են հաճախորդի կողմից:**

Տարեկան փաստացի տոկոսադրույքը

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

i — տարեկան փաստացի տոկոսադրույք (APR)

A — կրեդիտի գումար (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)

n — կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվ

N — կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար

Dn — կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ
Գումար՝ 12.000.000ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 22.7 %
Ժամկետ՝ 120 ամիս
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 42.9%

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ: ՁԵՐ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ: ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅՈՒՄ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԲԱՎԱՐԱՐ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼ, ԱՊԱ ՁԵՐ ԱՅԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ:

Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05: Ընդ որում ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում կրեդիտավորման ընդհանուր ծախսը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ և նվազեցվում է սպասարկման վճար, տոկոս և մայր գումար հաջորդականությամբ:

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ:ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ, ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ ՈՒՎԿ ՓԲԸ-ի ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ

ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ, ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ ՈՒՎԿ ՓԲԸ-ն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

Դիմել հիմա

Վարկավորման պայմաններ — [բեռնել]
Ծառայության նախորդ տարբերակներ